



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1900.

ԹԻԻ 1



ՔՐԻՍՏՈՍ ԹԷ ԲԱՐԱՐԱՐԱ

Այս ամիս Գննդեան Տօնը կը սօնենք, և միտք կը բերենք թէ ի՞նչ պէս երկնային զօրքերը երգեցին երբ Քրիստոս ծնաւ Բեթլեհեմի մէջ: Այս էր կերպը որով հրեշտակները ողջունեցին Քրիստոսի աշխարհ գալը: Այս պատկերը կը ցուցնէ թէ մարդիկ ի՞նչ պէս ընդունեցին զԱնիկա: Կը տեսնենք Պոնտացի Պիղատոս կուսակալը որ մէջտեղը կայնած իր մէկ կողմը կը ցուցնէ Քրիստոսը, և միւս կողմը՝ Բարբարան, և կը հարցնէ, «Ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ. Բարբարան թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի:» Եւ անոնք աւագակ և մարդասպան Բարբարան ընտրեցին: Եւ սակայն ամէնն ալ չմերժեցին Աստուծոյ՝ մարդոց շնորհած մեծ պարգևը, Բաց ի Արևելքէն եկող մոգերէն և Սիմէօն ծերունիէն և Աննա մարգարէն, կը դաժնուէին ուրիշներ ալ որ իրենց սիրտերը անոր բացին, և անոր դատաւարտութեան օրը վշտաբեկ այր և

կին մարդիկ կային որոնք կը սիրէին Քրիստոսը անհուն սիրով զոր ոչ ոք ունէր կուսակալին կամ Հրէից գլխաւորներուն հանդէպ որոնք դատաւարտեցին զԱնիկա: Հիմա ալ այսպէս է բանը: Կան այնպիսիներ որոնք Քրիստոսը կ'ընդունին, ոչ միայն Բարբարայի նման չար մարդոցմէ աւելի նախապատիւ համարելով զանիկա, այլ բոլոր ուրիշ բարեկամներէ ալ աւելի, և այս օրհնեալ Տէրոյ հանդէպ իրենց սիրոյ և մեծարանաց սաստկութենէն կ'ըսեն, «Ո՞վ ունիմ ես երկնից մէջ երկրի վրայ ալ քեզմէ ուրիշ չեմ ուզեր:» Բայց կան ուրիշներ որոնք անփոյթ են անոր նկատմամբ: Ընտրութիւն ընելու առաջարկութիւնը մեզի ալ կը ներկայացուի, ինչպէս Հրեաներուն ներկայացուեցաւ: Պիտի ընտրե՞նք բարիներուն, մաքուրներուն և Քրիստոսը սիրողներուն ընկերակցութիւնը, որոնց թագաւորը և Գլուխը Քրիստոս է, թէ պիտի ընտրենք չարներուն և անպա-

տիւներուն ընկերութիւնը որոնց ներկայացուցին է Բարբարա: Կ'ուզե՞նք Քրիստոսի կողմն ըլլալ և անոր շնորհքովը անոր պէս ըլլալ և անոր գեղեցիկ բնակարանին յարմար, թէ կ'ուզենք ապրիլ անձնասէր և անարժան կեանքով, այնպէս որ հանդերձեալ աշխարհին մէջ մեր բնական և յարմար բնակարանը Բարբարայի և անոր նմաններուն հետ ըլլայ:

—•••••

ՈՋՆԻ

Մարդ կը կարծէ թէ ողնին ասեղի ողջ բարձ մըն է: Եւ իրաւ որ այնպէս է, միայն թէ ողնիին ասեղներուն սուր ծայրերը դուրսի կողմն են փոխանակ ներսն ըլլալու: Չայն մը հանցեք և նայեցեք թէ ի՞նչ կը պատահի: Ողնին ականջները կը անկէ, գլուխը մարմնին ներքեւ և ոտքերը ծնօտին տակը կը քայէ, և մէկ վայրկեանի մէջ սուր ծայրերով գնառակի մը կը փոխուի: Վայ այն շան կամ աղուէսին որ հիմա կը ջանայ զանիկա

ուտել: Կենդանի մը, որ կը փափաքի լիծարա մը գնդաւանդ և ասեղ իրեն նախաճաշ ընել, կրնայ ողջ ողնի մը ընթրիք ընել: Ողնիին ձագը աշխարհ կու գայ Մայիսին մէջերը: Մարդ զանիկա առաջին անգամ տեսնելուն՝ կը խորհի թէ այդ պղտիկը յարմարութիւն չունի կեանքի պայքարը մղելու: Կոյր և խուլ կը ծնի, մարմը կարմիր է և այնքան բարակ՝ որ գրեթէ կըրնաք տեսնել մէջէն կունակին վրայի հետաքրքրաշարժ ճերմակ փետուրները կամ փուշերը: Ասոնք կակուղ են, և քիչ ծառայութիւն կրնան ընել եթէ շուն մը կամ կատու մը անոր բնակարանը մտնէ անոր մօր դուրս գտնուած ժամանակը: Միևնոյն բոյնին մէջ իրեն հետ կ'ունենայ երկու կամ երեք եղբայրներ կամ քոյրեր: Տեսնելու կամ լսելու կարող եղածին պէս՝ կը ծանօթանայ անոնց: Բայց ողնիին ձագը երբեք չմանիր իր փշոտ հօր և մօր, մինչև որ քանի մը ամիսներ շանցնին: Օգոստոսի վերջերը անոր փուշերը աւելի մթազոյն կ'ըլլան, աւելի զօրաւոր և աւելի առատ: Յերեկները բոյնին մէջ կը մնայ: Գիշերները աներկիւղ դուրս կ'ելլէ և կը պտրտի սողին անդին, կը կտրտէ բզէզներու կեղևները զորոնք կը գտնէ լուսնի լուսով ժուռ եկած ժամանակը, և շատ ճիւներ և թրթուրներ կ'ուտէ, վասն զի Միջատակեր կոչուած կենդանիներէն է: Բայց կը սիրէ ուտել նաև ուրիշ աղէկ բաներ ալ: Խեղճ գորտերը, բոլոր ցեղերը ասդին անդին կերակուր փնտռելու համար թափառելէ ետքը, գիշերը պէտք ունին ողնիին ակռաներէն զգուշանալու: Եթէ անթի ողնի մը իր ճամբուն վրայ օձի մը հանդիպի, շատ կ'ուրախանայ: Թուուուոր օձէն այնքան կը վախնայ որ քան կը վախնայ բզէզէն, այսինքն երբեք չվախնար անկէ: Կը թուի թէ թոյնէ չազդուիր: Եթէ խայթուի իր փափուկ զթէն, պաղարիւնութեամբ կը լղէ վերքը և կը վազէ իր սողուն թշնամիին ետևէն և կը խածնէ զանիկա կունակի ոսկորէն: Քանի մը վայրկեանի մէջ ողնի կ'ուտէ, կը լմցնէ իր ընթրիքը, միշտ օձին պոչէն սկսելով, և ուտելով զայն դէպ ի գլուխը, անոր ոսկորները կերած ժամանակը

շուռաչման ձայներ հանելով ինչպէս ձի մը կ'ընէ ստեպղին կերած ժամանակը: Երկրագործները կը տրանջան որ ողնիին գոհ չըլլար լոկ օձ, գորտ և ճճիներ ուտելով, այլ կը մտնէ ամբարանոցներուն մէջ և հակիթ կը գողնայ, և եթէ քիչ ըլլայ հակիթը, երբեմն զանոնք ածող հաւերուն ալ ետևէն կ'իյնայ: Իրօք այս նենդաւոր արարածը յանցապարտ է այն քանի մը սև յանցանքներով որոնց համար աղուէսը սաստկապէս ամբաստանուած է: Մինչև անգամ կաքաւներ և նապաստակներ ցաւով հասկըցած են թէ ողնի իրենց ալ կը վնասէ, և երբեմն զոհ գացած են անոր



սուր և զօրաւոր ակռաներուն: Երբ ձմեռ կու գայ, ողնի կը մտնէ մամուռէ և տերևներէ շիտուած բոյն մը ցանկի մը կամ անամէջ ծառի մը մէջ և յուրտ եղանակի միջոցին կը քնանայ հոն: Գարնան մէջ կ'արթննայ և կին մը կ'առնէ: Սա այնպէս կը ծածկէ իրենց մամուռէ բոյնը, որ կաթիլ մը անձրևներս չկրնար անցնիլ: Յետոյ մայր ողնիին ձագեր կը բերէ իրենց հանգրստաւետ բնակարանին մէջ և կը հսկէ անոնց վրայ, մինչև որ անոնց փուշերը կարծրանան և սուրնան իրենցնէրուն պէս և կարող ըլլան իրենքզիրենք հողալ:

ՍՐԸ ԶՈՆ ՅՐԱՆՔԻՆ

Չկայ վտանգ մը որ իր հրապոյրը չունենայ կարգ մը մարդոց համար: Սթէնի կրկին և կրկին վերագարծաւ

կեդրոնական Ափրիկէի անապատները, հակառակ անօթութենէ և տենդէ տանջուելուն և իր Եւրոպացի ուղեկիցներուն մահուանը ու բնիկներուն թշնամութեանը: Նանսէն, ֆիրի և ուրիշ Արջային Բևեռի խուզարկուներ գոհ եղած չեն մէկ ձմեռ ծայրագոյն Հիւսիսի մթութեան և կծու ցուրտին մէջ անցընելով, այլ երկրորդ կամ երրորդ անգամ նորէն կ'երթան այն կողմերը խուզարկելու: Այս կարգէ անձերէն մէկն է Սըր ձոն Ֆրանքլին, որ Անգղիա ծնաւ 1786 ին: Երբ դեռ 14 տարեկան էր միայն, մասնակից եղաւ Նէլսոնի ծովային մեծ յաղթութիւններուն, և յաջորդ տարին Աւստրալիական ծովերուն մէջ խուզարկութեան գացող արշաւախումբի մը ընկերացաւ: Իր առաջին Արջային խուզարկութիւնն եղաւ 1818 ին: Բայց իր երկու նաւերէն մէկը այնքան ծանր կերպով վնասուեցաւ սառնամանիքէն որ նոյն տարուան մէջ նորէն ետ դարձաւ: Կրկին ճամբայ ելաւ 1819 ին, և այս անգամ բացակայ գտնուեցաւ երեք տարի, մեծամեծ դժուարութիւններու տակալով, բայց 5,500 մղոնէ աւելի ցամաք և ծով ճամբորդեց և մեծ յաւելումներ ըրաւ Հիւսիսային Ամերիկայի Արջային սահմաններուն վրայով աշխարհի գիտութեան վրայ: Նորէն դնաց 1825 ին և վերագարծաւ 1827 ին, և այս անգամ իր ճամբորդութիւնը առաջիններէն շատ մը նուազ տառապալի եղաւ: Սըր ձոն Ֆրանքլինի ճամբորդութիւնները աւելումներ կողմերն եղան բաւական տարիներ: Բայց 1845 ին որոշուեցաւ ուրիշ արշաւախումբ մը զրկել աւարտելու համար հիւսիսային արևմտեան անցքին, այսինքն ծովային ճամբու մը, խուզարկութիւնը Հիւսիսային Ամերիկայի հիւսիսակողմը: Սըր ձոն Ֆրանքլին իր բերեց Արջային ծովասպայ, ըսաւ թէ հրամանատարի պաշտօնն իր իրաւունքն է, բայց երբ պատասխան արուեցաւ թէ միթէ ինք 60 տարեկան չէր և անցուցած չէր այդպիսի պաշտօն մը կատարելու տարիքը, ըսաւ, «Ոչ, ես 59 տարեկան եմ միայն»: Այդ արշաւախումբէն ոչ մէկը ետ դարձաւ. և շատ տարիներ յետոյ և երկարատեւ խուզարկութիւններէ ետև ստուգուե-

ցաւ այդ երկրախոյզներուն վիճակը: Տիկին Ֆրանքլին զարմանալի անձնա- նուիրութիւն ցուցուց խուզարկութեան համար իր նախանձին մէջ, իր հարստու- թեանէն մեծ մաս մը այդ նպատակին յատկացնելով:

ՓՈՔՐԻԿ ԱՐՈՒԵՍԱԳԷՏ ՄԸ


«Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս» (Եփես. Ե. 1): Գի- տէք որ մենք շատ անգամ կ'ուզենք նմանիլ մեր ծնողներուն, անոնց ըրած- ներուն պէս կ'ընենք և անոնցմէ օրի- նակ կ'առնենք: Անցեալ օր փոքրիկ տղայ մը ըսաւ, «Երբ մեծ- նամ, կ'ուզեմ որ բարի մարդ մը ըլլամ հայրիկին պէս, և քարոզեմ անոր նման.» Շատ ուրիշներ ալ կան որ մեծ- ցած և բարի մարդիկ և կի- ներ եղած են, անոր համար որ քրիստոնեայ ծնողներ ունեցած էին, և ջանացած էին անոնցմէ օրինակ առ- նել:

Ժամանակաւ աղքատիկ, փոքր իտալացի գերի տղայ մը կար, որուն տէրը Մու- ըիլլօ, շատ մեծ պատկերա- հան մին էր: Փոքրիկ գե- ըին, Սեպասթիան, միշտ ա- նոր արուեստանոցին մէջ կը դստնէր, և կը սիրէր դի- տել իր տէրը անոր նկարած միջոցին: Օր մը պատկերա- հանը իր սենեակին մէջ տե- սաւ կնոջ մը գլխուն մէկ կիսկատար պատկերը որ մեծ տաղանդ կը ցուցնէր, և մտածեց թէ արդեօք ո՛վ շինած էր զանիկա: Հարցա- փորձ ըրաւ, բայց Սեպաս- թիանի բոլոր ըսածը սա էր թէ օտարականի մը երբեք

նին Սեպասթիան իր տէրը տեսաւ որ դրան մէջ կայնած էր. վեր ցատկեց շատ սարսափած, մտածելով թէ բռնուեցաւ: Բայց պատկերահանը չբարկացաւ, միայն հարցուց թէ ո՞վ սորվեցուց քեզի պատկերահանութիւն: «Գուք, տէր», ըսաւ Սեպասթիան ե- ուանդով, «ես ձեզ կը դիտէի ամէն օր, և ձեր ինչպէս ընելը դիտելս սոր- վեցուց ինձի.»

Կ'ուզե՞նք որ մեր կեանքերը բարի և գեղեցիկ ըլլան Աստուծոյ առջևը: Ուրեմն Յիսուսի նայինք վայրկեանէ վայրկեան, օրինակենք անոր վարքը և զգուշութեամբ հետևինք անոր քայ- լերուն:

Ափրիկէ ճամբորդողները կ'ըսեն թէ երբեմն ընձուղաններուն շատ մօտէն ան- ցած են առանց անոնց ներկայութիւնն զգալու: Բայց կը սպաննուին Պուրերէն (Պօէր) և Հարաւային Ափրիկէի միւս բնակիչներէն իրենց մորթին համար որ աղէկ գին կ'արժէ, և կը վախցուի թէ շատ տարիներ չանցած բնաջինջ պիտի ըլլան և անհետանան: Հոս ցուցուածը Լոնտոնի կենդանաբանական Պարտե- ղինն է: Թէ՛ արուն և թէ՛ էջը կարճ եղջիւրներ կ'ունենան: Կենդանիին կե- ռակուրը բարձր տեղ մը կը դրուի. անոր շատ դժուար է ծուլ և գետնէն



խոտ կամ ցած թուփեր ու- տել: Ընձուղոր կ'աճի կը բազմանայ գերութեան մէջ: Գսանուերկու ընձուղաներ ծնած են Լոնտոնի կենդա- նաբանական Պարտեզներուն մէջ: Ընձուղոր մինչև իսկ գերութեան մէջ վայրի կեան- քի բնագոյ կը ցուցնէ: Բարձր ձայնէ շատ չեն վրդովուիր անոնք, բայց անոնց պա- հապանը կ'ըսէ թէ «Եթէ զիչեր ատեն գուլպաներով սողակիմ, այնքան կը վախ- նան որ կարծեմ իրենքզիրենք վար կը նետեն.» Այսպիսի ձայն մը պահուրտած գիշա- տիչ գազանի մը ձայն կը կար- ծեն, որ իբր թէ իրենց վրայ պիտի նետուի:

«ԵՍ Կ'ՈՒՋԵՄ»

«Բայց, մայրիկ, ես կ'ու- զեմ», պատասխանեց փոքրիկ տղայ մը երբ մայրը «Չկը- նար ըլլալ», ըսաւ անոր մէկ ուղած բանին համար: Մայ- ըր դժուարաւ կըրցաւ զպեղ իր ժպիտը, բայց որչափ կ'ընար, բացատրեց տղին ու- զածին կատարումը արգելող պարա- գաները: Սակայն փոքրիկը իր երեքը կախեց տխրութեամբ և իր մանկական ձայնով և հեկեկալով ըսաւ, «Բայց, մայրիկ, ես կ'ուզեմ.» Խեղճ փոքրի- կը կը սկսէր սորվիլ դասը զոր իրմէ մեծերու տարիներ պէտք եղած էր սորվելու համար, և որոնք տակաւին կարող եղած չէին բոլորովին սորվիլ: Երբեք դիւրին բան չէ սորվիլը, բայց որքան կանուխ սկսուի, այնքան քիչ դժուար կ'ըլլայ: Գրեթէ ամէն բան կարելի է սորվիլ եթէ սկսուի ման- կութեան մէջ: Երբ մէկը «Կ'ուզեմ» ը բաւական պատճառ կը սեպէ իր ու- զածին գործադրուելուն, դժուար կու-

ԸՆՁՈՒՂՏ

Ընձուղոր թէպէտ ոչ ամենածանրը բայց ամենէն բարձրը և շատ բարձրն է բոլոր ցամաքային կենդանիներուն մէջ: Մեծ մասով ծառերու տերևներ կ'ուտէ, ուստի պէտք ունի բարձրա- հասակ ըլլալու որպէս զի անոնց հաս- նի: Երբ չափահաս ըլլայ, 15 է մինչև 17 ոտք բարձրութիւն կ'ունենայ, այս- ինքն միջակ մարդու մը երեք բարձ- րութիւնը: Ընձուղաններուն բնավայրն է անտառներուն մէջ, և անոնց մոր- թերուն գոյները և պիտակները այն- չափ կը նմանին ծառերուն բուններուն որ դժուարաւ կը զանազանուին անոնց մէ, ուստի կը ծածկուին տեսութենէ:

թոյլ տուած չէր իր տիրոջ սենեակը մտնել անոր բացակայութեան միջոցին: Տէրը չհաւատաց անոր ըսածին: Օր մը երբ դուրսը կը գտնուէր, անակնկալ կերպով աուն դարձաւ և կամացուկ մը արուեստանոցը եկաւ: Գուռը բաց էր, և մեծ զարմանքով տեսաւ որ փոքրիկ գերին երանգապնակը ձեռ- քը նստած էր պատկերակալին առջև որուն վրայ կախուած էր նոյն իսկ ան- ցեալ օրուան տեսած պատկերը գրե- թէ լինցած: Պատկերահանը հիացած կեցաւ անչարժ, վասն զի գեղեցիկ պատկեր մըն էր այն, և փոքրիկ տղան վրձինով պատկերին կը գպչէր տեղ տեղ աւելի կատարելութիւն տալու համար անոր: Բայց յաջորդ վայրկե-

գայ յանկարծ լսել թէ «Մնկարելի է»։ Աւելի աղէկ է կանուխ սորվիլ անխուսափելիին տեղի տալ, և համբերութեամբ հպատակիլ երբ հարկ ըլլայ հրաժարել մեր նպատակներէն և փափաքներէն։ Օգուտ չունի մեր գլուխները քարերուն և պատերուն զարնել կամ մեր նպատակները գործադրելու ելլել տրամաբանութեան, խրատներու կամ համոզումներու հակառակ։ Այսպիսի ընթացք մը կրնայ յաջողիլ ժամանակ մը, բայց եթէ շարունակուի, անշուշտ աղետալի վախճան կ'ունենայ։ Դասը կանուխ սորվեցէք, այն ատեն աւելի դիւրին կը գտնէք։ Մեր կանոնը ըլլալու չէ ընել ինչ որ կ'ուզենք, այլ ինչ որ ուզիվ է և լսւազոյն։



ԺՈՒԹԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆՁԱԻՈՐ ՇՈՒՆ ՄԸ

Ազարակի հին կապոյտ կառքը որ պարտէզի կանանչ ընդեղէններով և բանջարեղէններով բեռնաւորուած էր, հաճելի տեսարան մը կը ներկայացնէր քաղաքին հրապարակին մէջ, և երկրագործը այնպիսի քաղցր դէմք մը և այնպիսի ընտանի կերպարանք մը կը ցուցնէր ամենուն որ շատեր տեսնելով կը ժպտէին կամայ ակամայ։ Բայց երկրագործին շունն էր որուն աւելի կ'ուզուէր անցորդներուն ուշադրութիւնը։ Շքեղ և ընտիր Նիւֆրնաղէն տի շուն մըն էր, ածուխի պէս սեփսե, բայց ի կուրծքին վրայ պզտիկ ճերմակէ մը և քթին գորշ գոյնէն որ կենդանիին ծերութեան նշանն էր։ Կայնած էր իր տիրոջը քով, անցուդարձը կը դիտէր սպասողի նայուածքով, կը շարժէր պոչը վեհ երեւոյթով մը երբ մէկը կը մօտենար բան մը գնելու համար։ Եւ ահա մարդ մը կայնեցաւ քիչ մը և ըսաւ, «Ի՞նչ է շան անունը», «Տառ», պատասխանեց երկրագործն անմիջապէս։ «Տառ՛ւ, տառիկա տարօրինակ անուն մըն է շան մը համար»։ «Այո, կարծեմ այդպէս է, բայց անոր շատ յարմար անուն է։ Լման անունն է Նիլ Տառ»։ «Հասկըցայ, ժուժկալութեան շուն», ըսաւ օտարականը ժպտելով։ «Կարծեմ շունը զատ ուրիշ բան չիմեր»։ «Այո, բայց ատկէ ալ աւելի բան մըն է, ժուժկալութեան բարեկարգիչ մըն է կանոնաւոր»։ Թուեցաւ թէ օտարականը կ'ուզէր ընել շան պատմութիւնը։ Աւտի երկրագործը շարունակեց.

(*) Նիլ Տառ Արեւիկայի մէջ հանրաձայնութեամբ մըն է ժուժկալութեան։

«Ճի՛մ Մնաու անուն գործաւոր մը, զանիկա առաւ փողոցները պտտող փերեղակէ (չէրչի) մը երբ շունը տակաւին իբր մէկ տարեկան էր։ Ճի՛մ աղէկ գործաւոր մըն էր և վայելուչ անձ մը ուրիշ նկատումներով, բայց երբեք տուն չէր վերադառնար առանց լաւ մը գինովցած ըլլալու։ Օր մը, շունը առնեցէն մէկ երկու շաբաթ ետքը, տուն եկաւ սովորականին պէս սաստիկ գինովցած։ Շունը դրան աստիճաններուն վրայ պռուկած էր արեւին մէջ, Շատ կը սիրէր ձիմը, բայց այս անգամ փոխանակ վազել դիմաւորելու, ելաւ միմաւրով, կոնակի մազերը խողի մազերու պէս ցցած և բոլոր ակունները ցուցնելով։ Գլուխը խելք ունեցող ամէն մարդ պիտի փախչէր, բայց ձիմ ա՛յնքան գինովցած էր որ չէր հասկնար թէ շունը ի՛նչ կ'ընէր։ Խօսեցաւ անոր, բայց այն վարկենին որ ջանաց քայլ մը առնել շանը մօտ երթալու համար, շունը վրան նետուելով խածաւ ձեռքը և կախուեցաւ։ Ճի՛մ պոռայ սարսափով, և իր գործատէրները վազեցին եկան, և ըրին ինչ որ կրնային ընել մարդն ազատելու համար։ Հետեւեալ օրը շունը առաջուան պէս բարբառոյ էր, բայց երբ ձիմ տուն դարձաւ մէկ երկու շաբաթ յետոյ, նորէն գինովցած, շունը նորէն միմաւր և ակունները ցուցուց, ճիշդ ինչպէս որ ըրած էր առաջ, և վերջը ամբարանոցը գնաց և հոն մնաց երկու օր։ Ճի՛մ սրտին մէջ պահեց բանը։ Առաջ շատ խրատներ և յորդորներ լսած էր, բայց երբեք օգտուած և խմտութէն ետ կեցած չէր։ Երբ երրորդ անգամ նոյն բանը պատահեցաւ, ըսաւ, «Աղէկ ուրեմն, եթէ ես խմբովայն քան կը նուաստանամ որ շունն կ'ա՛մբնայ ինձի ընկերանալու, կարծեմ ա՛լ եկած է խմտուքս ձգելու ժամաւ»։ «Նախ»։ Ճի՛մ խօսքին վրայ կեցաւ, ա՛լ երբեք կաթիլ մը չառաւ բերանը, և այդ օրէն ետքը ա՛լ երբեք չգժտուեցաւ շանը հետ։

Ճի՛մի գինով տուն դարձած ժամանակը պատահող ամէն մարդու վրայ կը յարձակէր շունը։ Չէինք գիտեր թէ ի՛նչ էր պատճառը։ Բայց իբր երկու տարի յետոյ փերեղակը պատմեց մեկուն թէ ի՛նչպէս օր մը գինետան գործաւոր մը այս շան մօրը զարկաւ տաք երկաթով մը, և անկէ ետեւ շունը երբեք չէր թողուր որ գինով մը իրեն մօտենայ։ «Կարծեմ անոր ձագն ալ մօրմէն ժառանգած է գինովն»։

րուն դէմ ցուցած հակակրօթիւնը», ըսաւ։ «Բայց շունն ի՛նչպէս ձեռք բերիք», հարցուց օտարականը։ «Պատմեմ», ըսաւ երկրագործը, «գիտէք որ անունն Մնաու է, ձէյմն Նիլ չըլլար, հիմա տակաւին գործաւոր պիտի մնայի փոխանակ լաւ ազարակի մը տէրն ըլլալու։ Խեղճ ծերուկ շուն։ Հիմա հետզհետէ տարիքը կ'առնէ, բայց ես պիտի չմոռնամ զինքը»։



ՀՈՒԹ ԻՆՁՊԵՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԳՏԱԻ
Հռութ, որ տակաւին նոր աղէկացած էր ծանր հիւանդութենէ մը, ըսաւ, «Մայրիկ, ես աղօթք ըրի երէկ գիշեր»։ «Այնպէս է սիրելիս, դուն միշտ աղօթք չէ՞ս ըներ»։ «Այո, կ'ընեմ, բայց երէկ գիշեր ճշմարիտ աղօթք մը ըրի։ Չեմ կարծեր թէ առաջ ճշմարիտ աղօթք մը ըրած էի երբեք։ Ես երկար ժամանակ արթուն մտացի պառկելէս ետքը։ Մտածեցի թէ շատ անգամ չար աղջիկ մը եղած էի։ Չանացի համբել ըրած բոլոր չար բաներս, և շատեր գտայ։ Չանացի միտք բերել մէկ շաբաթուան մէջ ըրածն երս, բայց տեսայ որ մեծ դէժ մը եղան, և տակաւին ամէնն ալ միտքս բերած չէի։ Եւ խորհեցայ թէ ի՛նչ պիտի ընէի եթէ Յիսուս ինձի եկած ըլլար հիւանդութեանս ատենը։ Յետոյ մտածեցի Յիսուսի՛ շարերուն համար մեռնելու եկած ըլլալուն և ուրախութեամբ անոնց ներելու պատրաստ ըլլալուն վրայով։ Այնուհետեւ ելայ անկողնէս և ծնկան վրայ եկայ և ջանացի ըսել Յիսուսի թէ ի՛նչպէս չար եմ, և խնդրեցի անկէ որ խորհի այն մեղքերուս վրայ զորոնք կրցած չէի միտք բերել։ Յետոյ սպասեցի և անոր ժամանակ տուի որ խորհի անոնց վրայ, և երբ կարծեցի թէ յիշած էր զանոնք ամէնն ալ, խնդրեցի որ ներէ անոնց։ Եւ վստահ եմ թէ ներեց, մայրիկ, վասն զի ըսած է թէ կը ներէ։ Անկէ ետքը երջանկութիւն զգայի, անկողին մտայ, և ա՛լ երբեք չստակացի Աստուծակէ»։

«Երանի անոնց, որոնց անօրէնութիւնները ներուեցան, և որոնց մեղքերը ծածկուեցան»։ Հռով. Գ. 7։

Տարեկան բաժանորդ կանխիկ, ամէն տեղւոյ հասցէն յայտնելով։

Արեւիկայի Միտիանալոյ Արտօնատէր Տնօրէն—Խմբագիր

ԿՈՍՏԱՆԴՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ